«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
հինգշաբթի, 23 ապրիլի 2026թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
12 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Վարդան Աթայան
Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտտ
Ռուբեն Ինջիկյան
Կարինե Մինասյան
Վախթանգ Աբրահամյան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Գոհար Գրիգորյան
Օվսաննա Առաքելյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Վաղինակ Ստեփանյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
ՀՀ Կենտրոնական բանկի ներկայացուցիչ Տիգրան Հարությունյան
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

Աննա Բադոյանը ներկայացրեց, որ 23.04.2026թ. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 31.03.2026թ. դրությամբ:
Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական

կայքէջում, azdarar.am կայքում, հրապարակվել է «Ժողովուրդ» օրաթերթում, ծանուցումները քվեաթերթիկների հետ միասին տրամադրվել / ուղարկվել են բաժնետերերին 01.04.2026թ.-ին:
Ժողովի օրակարգի հարցի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 23.04.2026թ.-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 23.04.2026թ.-ին:

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 191,254,472 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 182,772,661 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 95,57%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը ողջունեց մասնակիցներին, բացեց նիստը և ներկայացրեց օրակարգի հարցի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հարց 1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

Գագիկ Զաքարյանը ներկայացրեց, որ Խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանը դիմում էր ներկայացրել իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ՝ պայմանավորված այլ մասնագիտական գործունեության մեջ նախատեսված զբաղվածությամբ:

Ժողովի քարտուղարը ներկայացրեց, որ քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 182,559,328 ձայն, կամ մասնակիցների ձայների 99,88%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 213,333 ձայն, կամ մասնակիցների ձայների 0,12%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով բաժնետերերի ժողովը <u>որոշում կայացրեց</u> վաղաժամկետ դադարեցնել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի անդամ Վախթանգ Աբրահամյանի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն, 23.04.2026 թ.-ից:

Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց Վախթանգ Աբրահամյանին կարճատև, բայց միաժամանակ արդյունավետ համատեղ աշխատանքի համար: Բանկի Խորհրդի անունից ընդգծեց Վախթանգ Աբրահամյանին վերապահված ոլորտային ուղղություններով ակտիվ ներգրավվածությունը և բազմամյա փորձով կիսվելու պատրաստակամությունը:
Համոզմունք հայտնեց Վախթանգ Աբրահամյանի հետ բարեկամական հարաբերությունների պահպանման և նրա հետագա գործունեության ընթացքում նորանոր հաջողություններ գրանցելու հարցում:

Մեսրոպ Հակոբյանը, միանալով Գագիկ Զաքարյանի խոսքերին, Բանկի Վարչության անունից ևս երախտագիտություն հայտնեց Վախթանգ Աբրահամյանին Բանկի զարգացման գործում ունեցած ներդրման համար, մաղթեց նրա առջև դրված նպատակների և նախաձեռնությունների բարեհաջող իրականացում:

Ի պատասխան՝ **Վախթանգ Աբրահամյանը** շնորհակալություն հայտնեց համատեղ գործունեության համար՝ բարձր գնահատելով Յունիբանկում աշխատելու փորձառությունն ու թիմային աշխատանքը, և վստահություն հայտնեց փոխգործակցության շարունակականության պահպանման և զարգացման կապակցությամբ:

Աննա Բաղոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցը քննարկված է, որոշումն ընդունված է, դիմեց հարցեր տալու առաջարկով: Հարցեր չհնչեցին:

Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և

ավարտեց բաժնետերերի ժողովը ժամը 14:20:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 23 ապրիլի 2026թ.